Արձանագրություն N 6

<<ՀՀ ՎԿ-ԲՄԱՊՁԲ-2020/1>> ծածկագրով գնահատող հանձաժողվի նիստի

25 մարտի, 2020թ.
Ժամը՝ 12:00

ք. Երևան

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ — Ա. Շահինյան

Հանձնաժողովի անդամներ
/ԳՊ/ԳԱ/ — Բ. Գևորգյան
/ԳՊ/ԳԱ/ — Ա. Քյոսեյան

Քարտուղար՝ /ԳՊ/ՄԻՄ/ — Լ. Ադամյան

1. Հանձնաժողովը որոշեց, հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 2020 թվականի մարտի 19-ի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/22 որոշման 1-ին և 2 կետերը, դադարեցնել 2020թ. փետրվարի 17-ին կայացված <<Վեգա Ուորլդ>> ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և վերջինիս հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը և **<<ՀՀ ՎԿ-ԲՄԱՊՁԲ-2020/1>>** ծածկագրով ընթացակարգի շրջանակում կազմակերպել նոր միաժամանակյա բանակցություններ ներկայացված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ:

2. Հանձնաժողովը որոշեց, բանակցությունների անցկացման նիստը նշանակել 2020 թվականի ապրիլի 01-ին, ժամը 16:00-ին, Կառավարական տուն 3 հասցեում, 6-րդ հարկ, 613 աշխատասենյակում:

<<ՀՀ ՎԿ-ԲՄԱՊՁԲ-2020/1>> ծածկագրով գնահատող հանձաժողվի նիստի շարունակություն

01 ապրիլի, 2020թ.
Ժամը՝ 12:00

ք. Երևան

3. Հանձնաժողովը որոշեց, հիմք ընդունելով ՀՀ Պարետի 2020 թվականի մարտի 31-ի թիվ 27 որոշումը, որն ուղղված է նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID- 19) տարածումը կանխելուն և երկրում հայտարարված արտակարգ դրությունը, բանակցությունների անցկացման նիստը հետաձգել:

4. Հանձնաժողովը որոշեց, բանակցությունների անցկացման նիստը նշանակել 2020 թվականի ապրիլի 13-ին, ժամը 16:00-ին, Կառավարական տուն 3 հասցեում, 6-րդ հարկ, 613 աշխատասենյակում:

<<ՀՀ ՎԿ-ԲՄԱՊՁԲ-2020/1>> ծածկագրով գնահատող հանձաժողվի նիստի շարունակություն

ք. Երևան

13 ապրիլի, 2020թ.
Ժամը՝ 16:00

5. 2020թ. ապրիլի 13-ին ժամը 16:00-ին ՀՀ Կառավարական տուն 3 հասցեում, N 613 աշխատասենյակում կազմակերպվել են միաժամանակյա բանակցություններ **<<ՀՀ ՎԿ-ԲՄԱՊՁԲ-2020/1>>** ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված գնային առաջարկների նվազեցման նպատակով:

6. Բանակցություններին ներկայացել էր «Վեգա Ուորլդ» ՍՊԸ -ի և «Յուքոմ» ՓԲԸ-ի կողմից լիազորված անձինք: Բանակցությունների տևողությունը սահմանվեց 15 րոպե: Բանակցությունների արդյունքում «Վեգա Ուորլդ» ՍՊԸ -ի կողմից ներկայացվեց նոր գնային առաջարկ՝ 200879400 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն), «Յուքոմ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվեց նոր գնային առաջարկ՝ 201515900 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն):

7. Ներկայացված հայտերի հիման վրա **<<ՀՀ ՎԿ-ԲՄԱՊՁԲ-2020/1>>** ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ին, 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Յուքոմ» ՓԲԸ-ին, 3-րդ տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով:

8. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

9. Ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիրը կնքվելու է անգործության ժամկետի ավարտից հետո, օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հանձնաժողովի
Նախագահ՝
ԳՊ/ԳԱՊ ---------- Ա. Շահինյան

Անդամներ՝
ԳՊ/ԳԱ ---------- Բ. Գևորգյան
ԳՊ/ԳԱ ---------- Ա. Քյոսեյան
Քարտուղար՝
/ԳՊ/Միմ/ ---------- Լ. Ադամյան